



**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**  
*Private & Investment Banking*

**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ**

Հաստատված է նոր խմբագրությամբ՝  
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության  
28.08.2014թ. թիվ 84-Լ որոշմամբ

Ուժի մեջ է՝ 29.08.2014թ.-ից

**ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ**

**ՊԱՅՄԱՆԱԳՐ N CS000000/000  
պահառության ծառայությունների մատուցման**

ք. Երևան

«--» -----20--թ.

Սույնով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Պահառու») առաջարկում է յուրաքանչյուր անձի (այսուհետ՝ «Հաճախորդ») սույն պայմանագրին միանալու եղանակով Պահառուի հետ կնքել սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալ պայմաններով.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

- 1.1. Սույն պայմանագրով Պահառուն Հաճախորդին տրամադրում է՝
  - Հաճախորդի արժեթղթերի հաշվի, բացառությամբ ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատուների (այսուհետև՝ արժեթղթերի հաշիվ), բացման և վարման, ինչպես նաև բացված հաշիվներով գործառնությունների կատարման միջոցով Հաճախորդի արժեթղթերով հավաստվող իրավունքների հաշվառման (այսուհետև՝ արժեթղթերի պահպանում), արժեթղթերի փոխանցումների հաշվառման և հաստատման (ներառյալ արժեթղթերի պարտավորություններով ծանրաբեռնման) ծառայություններ,
  - Հաճախորդի արժեթղթերով հավաստվող իրավունքների (ներառյալ՝ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության և կառավարման իրավունքի) իրացմանը, արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտների, այդ թվում՝ շահութաբաժինների և այլ վճարումների ստացմանն օժանդակող ծառայություններ,
  - Հաճախորդի հանձնարարությամբ՝ պահառուական գործառնություններին առնչվող այլ ծառայություններ:
- 1.2. Սույն պայմանագրի կնքումը չի ենթադրում արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում Հաճախորդից Պահառուին:
- 1.3. Սույն պայմանագրի կնքմամբ Հաճախորդից չի պահանջվում արժեթղթերի անհապաղ գրանցում արժեթղթերի հաշվին (դեպոնացում):
- 1.4. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն այն նշանակությունը, որը սահմանված է Պահառուի կողմից հաստատված Պահառության գործունեության ընդհանուր պայմաններում (այսուհետ՝ «Ընդհանուր պայմաններ»), եթե սույն պայմանագրով այլ սահմանում չի տրվում:

**2. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 2.1. Պահառուն Հաճախորդի արժեթղթերի հաշիվը բացում և վարում է իր և այլ հաճախորդների հաշիվներից առանձին՝ ՀՀ օրենսդրությանը, սույն Պայմանագրի պայմաններին և դրա ներքո կնքված համաձայնագրերին, ինչպես նաև Ընդհանուր պայմաններին համապատասխան:
- 2.2. Արժեթղթերի հաշիվը բացվում է միայն Պահառուի մոտ Հաճախորդի բանկային (ընթացիկ)

- հաշվի առկայության դեպքում և Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով:
- 2.3. Արժեթղթերի հաշվով գործառնությունները կատարվում են Պահառուին Ընդհանուր պայմաններին համապատասխան ձևակերպված հանձնարարականի և գործառնության կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրման միջոցով: Հանձնարարականների տրամադրման կարգը սահմանվում է Ընդհանուր պայմաններով:
  - 2.4. Պահառուն պահառուական գործառնությունները կատարում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ սույն պայմանագրով և/կամ Ընդհանուր պայմաններով նախատեսված դեպքերի: Պահառուական գործառնությունների կատարման արդյունքում Պահառուն Հաճախորդին (նրա լիազորված ներկայացուցչին) է փոխանցում (ուղարկում) գործառնության կատարման մասին հաշվետվություն՝ Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով: Հաշվետվությունների և քաղվածքների տրամադրման ձևը սահմանում է Հաճախորդը՝ Հաճախորդի քարտը լրացնելիս:
  - 2.5. Հաճախորդը Պահառուին լիազորում է հանդես գալ որպես իր արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի անվանատեր և տալիս է իր համաձայնությունը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայիում (այսուհետև՝ ՀԿԴ) վարվող արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում (օտարերկրյա արժեթղթերի դեպքում՝ օտարերկրյա պահառուի կողմից Պահառուի ներկայացուցչական հաշվին) համապատասխան գրառումների կատարման վերաբերյալ:
  - 2.6. Հաճախորդի կողմից արժեթղթերի փոխանցումը Պահառուին՝ որպես անվանատիրոջ, իրականացվում է մուտքագրման հանձնարարականների և (կամ) այլ փաստաթղթերի հիման վրա՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
  - 2.7. Արժեթղթերից բխող իրավունքների իրականացման օժանդակող ծառայությունների մատուցման կարգը և սույն Պայմանագրով չնախատեսված այլ դրույթները կարգավորվում են Ընդհանուր պայմաններով:

### **3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3.1. Պահառուն իրավունք ունի.
  - 3.1.1. Ստանալ Հաճախորդի արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտներ և այլ վճարումներ՝ ստացված դրամական միջոցներն այնուհետև փոխանցելով Պահառուի մոտ բացված Հաճախորդի բանկային (ընթացիկ) հաշվին՝ Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում:
  - 3.1.2. Սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Հաճախորդից գանձել պահառության ծառայությունների մատուցման դիմաց վճարումները, այդ թվում՝ պահառության ընթացքում կատարված ծախսերի փոխհատուցումը:
  - 3.1.3. Ընդհանուր պայմաններով նախատեսված դեպքերում հրաժարվել Հաճախորդի կողմից ներկայացրած հանձնարարականների կատարումից:
- 3.2. Հաճախորդն իրավունք ունի.
  - 3.2.1. Իրականացնել արժեթղթերով ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործառնություն՝ արժեթղթերի թողարկման և շրջանառության պայմաններով և Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով:
  - 3.2.2. ՀՀ օրենսդրությամբ և Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով Պահառուի մոտ հաշվառվող արժեթղթերի տնօրինման և արժեթղթերից բխող իրավունքների իրականացման լիազորությունները փոխանցել այլ անձի՝ իր լիազորված ներկայացուցչին:
  - 3.2.3. Հարցման միջոցով Պահառուից ստանալ արժեթղթերի տիրապետումից ծագող իրավունքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:
  - 3.2.4. Միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը Պահառուին առնվազն 20 օր առաջ տեղեկացնելու պայմանով՝ սույն պայմանագրի 7.2. կետով սահմանված կարգով:
  - 3.2.5. Պահառուական գործառնությունների արդյունքները բողոքարկել Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում:
  - 3.2.6. Ստանալ արժեթղթերի հաշվի վիճակի և դրանում հաշվառվող արժեթղթերի, ինչպես նաև ցանկացած պահառուական գործառնության վերաբերյալ հաշվետվություններ

և/կամ քաղվածքներ՝ Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով:

3.3. Պահառուն պարտավոր է.

- 3.3.1. Բացել և վարել Հաճախորդի՝ այլ հաշիվներից առանձին արժեթղթերի հաշիվը՝ նշելով արժեթղթերի հաշիվով կատարված յուրաքանչյուր գործառնության ամսաթիվն ու հիմքը:
- 3.3.2. Պահպանել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահառության գործունեության իրականացման պահանջները:
- 3.3.3. Հաճախորդի հանձնարարությամբ և Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով գրանցել Հաճախորդի արժեթղթերի՝ պարտավորություններով ծանրաբեռնման դեպքերը:
- 3.3.4. Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով Հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին տրամադրել Հաճախորդի արժեթղթերի հաշիվով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ:
- 3.3.5. Գրավոր հարցման հիման վրա կամ Ընդհանուր պայմաններով սահմանված այլ ձևով Հաճախորդի արժեթղթերի հաշվից արժեթղթերի նկատմամբ իրավունքները հավաստող քաղվածքներ և արժեթղթերի հաշվի վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն տրամադրել՝ Ընդհանուր պայմաններով նախատեսված կարգով և ժամկետներում:
- 3.3.6. Արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերով գործառնություններ կատարել, ինչպես նաև դրանցից բխող իրավունքներն իրականացնել բացառապես Հաճախորդի (նրա լիազորված ներկայացուցչի) հանձնարարականների հիման վրա կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված (չարգելված) այլ դեպքերում:
- 3.3.7. Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով և դեպքերում, այդ թվում՝ ներկայացված փաստաթղթերը խախտումներով ձևակերպված լինելու դեպքում մերժել Հաճախորդի (նրա լիազորված ներկայացուցչի) ներկայացրած հանձնարարականի կատարումը՝ ներկայացնելով համապատասխան գրավոր հիմնավորում:
- 3.3.8. Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով Հաճախորդի՝ արժեթղթերից բխող իրավունքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և/կամ փաստաթղթերը փոխանցել թողարկողներից կամ ՀԿԴ-ից (օտարերկրյա պահառուից, որտեղ պահառուն ունի բացված ներկայացուցչական հաշիվ) Հաճախորդին (նրա լիազորված ներկայացուցչին) և Հաճախորդից թողարկողներին ու ՀԿԴ-ին (օտարերկրյա պահառուին, որտեղ պահառուն ունի բացված ներկայացուցչական հաշիվ):
- 3.3.9. Ընդունել և քննարկել պահառուական գործառնությունների վերաբերյալ Հաճախորդի կողմից ներկայացված բողոքները՝ Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով:
- 3.3.10. Հաճախորդին օժանդակ պահառուական ծառայություններ մատուցել՝ Կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերով և Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով:
- 3.3.11. Հաճախորդի պահանջով կամ սույն Պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ ոչ ուշ, քան Պահառուի կողմից Հաճախորդի (նրա լիազորված ներկայացուցչի) համապատասխան գրությունը ստանալու օրվան հաջորդող օրվա ընթացքում, արժեթղթերը վերագրանցել ՀԿԴ-ում (օտարերկրյա պահառուի մոտ, որտեղ պահառուն ունի բացված ներկայացուցչական հաշիվ) բացված Հաճախորդի կողմից նշված համապատասխան հաշվին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված արժեթղթերի տնօրինման իրավունքը սահմանափակված է Ընդհանուր պայմաններով և (կամ) ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված հիմքերով:
- 3.3.12. Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կամ Ընդհանուր պայմաններով սահմանված այլ պարբերականությամբ կարող է Հաճախորդին ներկայացնել արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի պահպանման վիճակի մասին հարցում, որի վերաբերյալ Հաճախորդի կողմից գրավոր մերժումը Պահառուն պետք է քննարկի Ընդհանուր պայմաններով սահմանված՝ բողոքարկման կարգին համապատասխան:
- 3.3.13. Տեղեկացնել Հաճախորդին Ընդհանուր պայմանների և Սակագներում փոփոխությունների մասին ոչ ուշ, քան դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից երեսուն օրացույցային օր առաջ:
- 3.3.14. Արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի իրավունքների պատշաճ իրականաց-

ման նպատակով Պահառուն պարտավոր է.

- լրիվ ծավալով և Ընդհանուր պայմաններով նախատեսված կարգով ու ժամկետներում Պահառուի մոտ բացված Հաճախորդի բանկային հաշվին փոխանցել արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտները՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 5.3 և 5.5 կետերի պայմանները,
- իրականացնել ՀՀ գործող օրենսդրությամբ և Ընդհանուր պայմաններով նախատեսված այլ գործառնություններ:

3.3.15. Ապահովել արժեթղթերի հաշիվների մասին տեղեկատվության գաղտնիությունը, ներառյալ հաշիվներով իրականացված գործառնությունների մասին և պահառության գործունեության իրականացման արդյունքում հայտնի դարձած այլ տեղեկությունները, ինչպես նաև չօգտագործել այդ տեղեկությունն այնպիսի նպատակներով, որոնք կարող են Հաճախորդին վնաս պատճառել: Երրորդ անձանց Հաճախորդի և նրա արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկություններ տրամադրվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն պայմանագրով և Ընդհանուր պայմաններով սահմանված դեպքերում:

**3.4. Հաճախորդը պարտավոր է.**

- 3.4.1. Պահառուին տրամադրել արժեթղթերի հաշվի բացման և դրա հետագա վարման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ Ընդհանուր պայմաններին համապատասխան:
- 3.4.2. Պահպանել ՀՀ օրենսդրությամբ, արժեթղթերի թողարկման և շրջանառության պայմաններով և Ընդհանուր պայմաններով սահմանված պահանջները, այդ թվում՝ ձևակերպել և Պահառուին փոխանցել արժեթղթերով գործառնությունների կատարման հանձնարարականները:
- 3.4.3. Հետևել Ընդհանուր պայմաններով սահմանված պահառուական գործառնությունների կատարման կարգին:
- 3.4.4. Պահառուին տեղեկացնել հիմնադիր փաստաթղթերի և (կամ) վավերապայմանների (փոստային և իրավաբանական հասցեների, բանկային հաշվի վավերապայմանների, հեռախոսային և ֆաքսիմիլային կապի համարների, էլեկտրոնային հասցեների), ինչպես նաև Հաճախորդի արժեթղթերի հաշիվը տնօրինելու լիազորություն ունեցող անձանց քարտային տվյալների բոլոր փոփոխությունների մասին, Պահառուին տրամադրել համապատասխան փոփոխությունները հավաստող բոլոր փաստաթղթերը՝ Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում:
- 3.4.5. Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով անհապաղ տեղեկացնել Պահառուին՝ իրականացված պահառուական գործառնությունների վերաբերյալ բողոքների և առարկությունների մասին:
- 3.4.6. Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կամ Ընդհանուր պայմաններով սահմանված այլ պարբերականությամբ Պահառուին 10 օրացույցային օրվա ընթացքում ներկայացնել արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի պահպանման վիճակի մասին Պահառուի կողմից կատարված հարցման գրավոր հաստատումը (մերժումը): Մերժում ուղարկելու դեպքում Հաճախորդը պարտավոր է ներկայացնել մերժման հիմքերը և առկա ապացույցները:
- 3.4.7. Սույն պայմանագրով և/կամ Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում կատարել Պահառուի ծառայությունների դիմաց վճարումները:
- 3.4.8. Արժեթղթերի հաշվում դեպոնացնել միայն այն արժեթղթերը, որոնք իրեն՝ որպես բարեխիղճ ձեռք բերողին են պատկանում սեփականության կամ այլ գույքային իրավունքով:
- 3.4.9. Պահառուի պահանջով ներկայացնել լիազորագրեր և այլ փաստաթղթեր՝ արժեթղթերով ամրագրված իրավունքների իրականացման հետ կապված գործառնությունների իրականացման համար:

**4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓՆ ՈՒ ԿԱՐԳԸ**

4.1. Պահառուի կողմից սույն պայմանագրի հիման վրա Հաճախորդին մատուցված ծառայություն-

ների դիմաց Հաճախորդը վճարում է ծառայությունների մատուցման պահին գործող Սակագներին համապատասխան:

- 4.2. Սակագներով նախատեսված վճարները Պահառուի կողմից գանձվում են Հաճախորդի դրամային հաշվի/հաշիվների մնացորդից/ներից: Սակայն, տվյալ հաշվի/հաշիվներին համապատասխան միջոցների բացակայության դեպքում Պահառուի գանձվելիք գումարը գանձում է Հաճախորդի արտարժույթային հաշվից/հաշիվներից՝ գանձման պահին Բանկի կողմից սահմանված արտարժույթի գնման փոխարժեքով: Պահառուի նախատեսված վճարները ներառում են նաև Պահառուի անվանատիրոջ հաշիվներում արժեթղթերի պահպանման և հաշվառման և (կամ) Հաճախորդի հանձնարարականներով իրականացված գործառնությունների համար այլ պահառուներին տրվող կոմիսիոն վարձատրությունը (այսուհետ՝ «Պահառուի ծախսերի փոխհատուցում»):
- 4.3. Արժեթղթերի դիմաց եկամուտները Հաճախորդին փոխանցելիս Պահառուն վճարում է Հաճախորդին հասանելիք գումարը՝ դրանից հանելով այդ եկամուտների հաշվարկման և փոխանցման համար Սակագների համաձայն հաշվարկված կոմիսիոն վարձատրության գումարը և Ընդհանուր պայմաններով սահմանված դեպքերում այլ գումարներ:
- 4.4. Հաճախորդի կողմից Պահառուի՝ սույն Պայմանագրի 4.2 կետին համապատասխան վճարումը չգանձելու դեպքում Պահառուն իրավունք ունի.
  - Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով կասեցնել Հաճախորդի արժեթղթերի հաշվով բոլոր պահառուական գործառնությունների իրականացումը՝ մինչև վճարումը,
  - արժեթղթերի դիմաց ստացված եկամուտների փոխանցման դեպքում իրականացնել Հաճախորդին հասանելիք գումարի վճարումը՝ դրանից հանելով իրեն հասանելիք կոմիսիոն վարձատրության գումարը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով,
  - վաճառել Հաճախորդին պատկանող համապատասխան քանակի կամ ծավալի արժեթղթեր Ընդհանուր պայմաններով և/կամ Սակագներով նախատեսված կարգով: Ինչի համար Հաճախորդը հանձնարարում է Պահառուին՝ անակցեպտ կարգով վաճառել Հաճախորդին պատկանող համապատասխան քանակի կամ ծավալի արժեթղթեր Ընդհանուր պայմաններով և/կամ Սակագներով նախատեսված կարգով և ստացված գումարից մարել Պահառուի հանդեպ ստանձնած Հաճախորդի պարտավորությունները, իսկ գումարի մնացած մասը (առկայության դեպքում) փոխանցել Հաճախորդի հաշվին:
- 4.5. Հաճախորդի կողմից Պահառուի ծառայությունների դիմաց վճարման չափն ու կարգը համարվում են փոփոխված՝
  - Կողմերի կողմից Պայմանագրի սույն բաժնով նախատեսված պայմանների փոփոխման կամ լրացման մասին լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից,
  - Պահառուի կողմից գործող Սակագներում համապատասխան փոփոխությունների իրականացման մասին Հաճախորդին ուղարկված գրավոր նամակի ստացման հաստատման պահից քսանօրյա ժամկետի ավարտից հետո:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Սույն պայմանագրով և Ընդհանուր պայմաններով սահմանված իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրության և սույն պայմանագրի դրույթներին համապատասխան:
- 5.2. Հաճախորդը պատասխանատու է Պահառուին ներկայացվող տեղեկատվության ժամանակին և ճշգրիտ լինելու համար:
- 5.3. Հաճախորդը երրորդ անձանց առջև պատասխանատվություն է կրում՝ Պահառուի մոտ հաշվառվող արժեթղթերի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների մասին տեղեկատվությունը Պահառուից թաքցնելու համար:
- 5.4. Պահառուն պարտավոր է փոխհատուցել Հաճախորդի վնասները, որոնք առաջացել են Պահառուի կողմից արժեթղթերի պահպանման պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում, ներառյալ արժեթղթերի հաշվում գրառումների կորստյան և

սույն պայմանագրով նախատեսված այլ պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերի, եթե չսպացուցվի, որ վնասները ծագել են անհաղթահարելի ուժի առկայության կամ Հաճախորդի դիտավորության կամ անզուգույնության հետևանքով:

- 5.5. Պահառուն Հաճախորդի առջև պատասխանատվություն չի կրում Հաճախորդի լիազորված ներկայացուցչի գործողությունների հետևանքով առաջացած վնասների համար:
- 5.6. Պահառուն պատասխանատվություն չի կրում Հաճախորդի ներկայացրած հանձնարարականների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, եթե դա տեղի է ունեցել փաստաթղթերի սխալ ձևակերպման, հանձնարարականների տեքստում սխալների, անճշտությունների առկայության, էլեկտրոնային կապի միջոցներով ուղարկված հանձնարարականների տեքստի ոչ լիարժեք ստացման, ինչպես նաև Պահառուից անկախ այլ պատճառների հետևանքով:
- 5.7. Պահառուն պատասխանատվություն չի կրում Պառահառուի կողմից Հաճախորդին ուղարկված տեղեկատվության չստացման կամ ոչ ժամանակին ստացման համար կամ սույն Պայմանագրով սահմանված պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար այն դեպքերում, եթե Հաճախորդն իր վավերապայմանների փոփոխությունների մասին սույն Պայմանագրի 3.4.4 կետին համապատասխան չի տեղեկացրել Պահառուին կամ տեղեկացրել է ոչ ժամանակին:
- 5.8. Պահառուն պատասխանատվություն չի կրում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրավապաշտպան մարմինների կողմից արժեթղթերի վրա կալանք դնելու և դրանց բռնագանձման հետևանքով ծագած վնասի համար:
- 5.9. Պահառուն պատասխանատվություն չի կրում թողարկողի, ՀԿԴ-ի (օտարերկրյա պահառուի, որտեղ պահառուն ունի բացված ներկայացուցչական հաշիվ) կամ արժեթղթերով գործառնություններում Հաճախորդի գործընկերոջ գործողությունների, թողարկողի կամ ՀԿԴ-ի (օտարերկրյա պահառուի, որտեղ պահառուն ունի բացված ներկայացուցչական հաշիվ) կողմից իրեն փոխանցված տեղեկատվության ոչ ճշգրիտ և ոչ ժամանակին լինելու, ինչպես նաև ուղղակի և անուղղակի վնասների համար, որոնք կարող են առաջանալ Հաճախորդի կամ երրորդ անձանց կողմից այդ տեղեկատվության օգտագործման կամ ուշացնելու պատճառով:
- 5.10. Պահառուն պատասխանատվություն չի կրում շուկայական պայմանների փոփոխության հետևանքով Հաճախորդի կրած վնասների կամ նրա կողմից կատարված ծախսերի համար:
- 5.11. Պահառուն պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից սահմանված ժամկետներում չներկայացված հանձնարարականների ժամանակին կատարման համար:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

- 6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Սույն պայմանագրի առումով անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներին են դասվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, սույն պայմանագրում նշված գործունեության տեսակները ուղղակի կամ անուղղակի ձևով արգելող և Կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը, կամ Կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

## **7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և անժամկետ է:
- 7.2. Սույն Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին այդ մասին գրավոր տեղեկացնելու պայմանով: Այդ դեպքում սույն Պայմանագիրը



համարվում է լուծված՝ Պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին Կողմերից մեկի գրավոր տեղեկացումը մյուս կողմի ստանալու պահից քսան օր հետո: Ընդ որում՝ Կողմերը պարտավորվում են նշված ժամկետի ընթացքում իրականացնել սույն Պայմանագրով սահմանված պարտականությունները:

7.3. Հաճախորդի նախաձեռնությամբ կամ Պահառուից անկախ այլ պատճառներով սույն Պայմանագրի լուծման դեպքում Պահառուի կողմից Հաճախորդի արժեթղթերի վերագրանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Հաճախորդը:

Պահառուի նախաձեռնությամբ սույն Պայմանագրի լուծման դեպքում Պահառուի կողմից Հաճախորդի արժեթղթերի վերագրանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Պահառուն:

## **8. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

8.1. Պայմանագրին միանալը (Պայմանների ակցեպտավորումը) տեղի է ունենում համապատասխան դիմումի (Այսուհետ՝ «Դիմում») (Ընդհանուր պայմանների Հավելված 1) ներկայացման միջոցով: Դիմումի ներկայացումը կնշանակի Հաճախորդի՝ Պայմանագրին միանալու անվերապահորեն համաձայնությունը:

8.2. Այն պարագայում, երբ Պայմանագրին միանալը (Պայմանների ակցեպտավորումը) տեղի է ունենում Պահառուի՝ «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոնների» շրջանակներում կնքվող Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման հետ միաժամանակ, Պայմանների ակցեպտավորումը տեղի է ունենում Պահառուի «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոնների» շրջանակներում ներկայացվող Հավելված 7-ում համապատասխան նշումները կատարելու միջոցով:

8.3. Ընդհանուր պայմանները, Բանկի տիրապետմանը հանձնված հաճախորդների միջոցների պաշտպանությունն ապահովելու համար ձեռնարկված քայլերի համառոտ նկարագրի մասին տեղեկատվությունը (Հավելված 2) և Սակագները հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը, որոնք տեղակայված են Պահառուի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.armswissbank.am](http://www.armswissbank.am)):

8.4. Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է Ընդհանուր պայմաններին և տեղեկացված է այն մասին, որ Պահառուն պահառության գործունեությունը համատեղում է արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության այլ տեսակների, մասնավորապես՝ դիլերային, բրոքերային և հավատարմագրային կառավարման գործունեությունների, ինչպես նաև բանկային գործունեության հետ: Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ և Ընդհանուր պայմաններով:

8.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության առ այն, որ սույն պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան: Կողմերը սահմանում են, որ Արբիտրաների կազմը ձևավորվում է «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգի» համաձայն: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ք. Երևանը: Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման: Կողմերը տեղեկացվում են, որ ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» կարող են ծանոթանալ Հայաստանի բանկերի միության կայքից՝ [www.uba.am](http://www.uba.am), [armswissbank.am](http://armswissbank.am) կայքից, ինչպես նաև ստանալ բանկի գլխամասային գրասենյակից և մասնաճյուղերից: Վեճը լուծվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն:

8.6. Սույն պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և

ստորագրված են Կողմերի կողմից, բացառությամբ Ընդհանուր պայմաններում և/կամ Սակագներում կատարվող փոփոխությունների: Ընդհանուր պայմաններում և Սակագներում փոփոխություններ կատարվում են Պահառուի կողմից միակողմանիորեն և հրապարակվում են Պահառուի պաշտոնական ինտերնետային կայքում, որտեղ նշվում է նաև հրապարակման ամսաթիվը:

- 8.7. Ընդհանուր պայմանները և դրա լրացումները սույն Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում:
- 8.8. Սույն Պայմանագրի դրույթներն Ընդհանուր պայմանների դրույթներին հակասելու դեպքում Կողմերն առաջնորդվում են սույն Պայմանագրի դրույթներով:
- 8.9. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պահառու՝**

**«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10

ՀՎՀՀ 02574955

h/h 103002102509, ՀՀ ԿԲ

հեռ. 54 06 96, 54 06 27

**Հաճախորդ՝**

Հասցե՝

Անձնագիր

Արժեթղթերի հաշվեհամար 25000

հեռ.

**Գործադիր տնօրեն**

\_\_\_\_\_ **Գ. Մաչակյան**

\_\_\_\_\_